9900

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«29» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0085-22

Ձեռնարկողը՝ ***«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ***
Շրջանցող Փ. / 14 Վեդի 0601 Վեդի Արարատ

Գործունեությունը՝ ***Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» փեղամասի արդյունահանման աշխատանքների (ընդլայնում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արարատի մարզ, Ուրցաձոր համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0085-22
«29» 06 2022թ.

Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի արդյունահանման աշխատանքների (ընդլայնում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Ուրցաձոր համայնք

Ներածական մաս. Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «ՇԵՆ» տեղամասի բացահանքի (ընդլայնում) նախագիծը կատարված է «ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ ենթակետի՝ Արարատի մարզի Շաղափի օրգանծին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի արդյունահանման (ընդլայնում) աշխատանքները դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակի:

Հանքավայրի օրգանածին կրաքարերի պաշարները թույլատրվել է օգտագործել կավճի (ԳՈՍՏ 17498-72) արտադրության համար և քանի որ, Շաղափի հանքավայրի «Շեն» տեղամասի օրգանածին կրաքարերն արդեն իսկ բնական վիճակում $CaCO_3$-ի 95 %-ից բարձր պարունակությունով համապատասխանում է ՄԿ-2 մակնիշի պահանջներին կարող են օգտագործվել շինարարությունում շենքերի ու կառույցների վերանորոգման (շինարարական մածուկներ պատրաստելու) համար:

Հաշվետվությունում գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

Նկարագրական մաս. Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «ՇԵՆ» տեղամասը գտնվում է Արարատի մարզի արևելյան մասում, Շաղափ գյուղից՝ 3կմ հարավ-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են՝ քաղաքներ Վեդին, Արարատը և Գոռավան, Շաղափ, Ուրցաձոր գյուղերը:

Օրգանածին կրաքարերի «Շեն» տեղամասը հարում է այդ նախալեռնային մասին, որոնց լանջերը դեպի հարավ և հարավ-արևմուտք իջնում են մինչև Արաքս գետի հովիտը:

Տեղամասը Շաղափ գյուղի հետ կապված է գրունտային ճանապարհով, իսկ՝ Շաղափ գյուղը մարզկենտրոն Արտաշատի հետ ասֆալտապատ մայրուղով: Հանքավայրի «Շեն» տեղամասը գտնվում է Շաղափի սինկլինալային ծալքավորման հարավային թևում՝ Ուրցի լեռնաշղթային հարավարևմտյան նախալեռնային մեղմաթեք լանջին:

Տեղամասի տարածքը սահմանափակվում է հետախուզական փորվածքներով և օգտակար հաստվածքի բնական մերկացված քիվերով: Տեղամասի երկրաբանական կառուցվածքի հիմքում տեղադրված են միջին էոցենի հասակի մոլասային նստվածքային առաջացումները (ավազաքարեր, կրաքարեր, կավեր և կավային ավազաքարեր), որոնք մերկանում են տեղամասի հարավային մասում մինչև 300մ հզորությամբ: Ավազաքարերն ունեն դեղնա-շագանակագույն երանգ, ցեմենտացված են կարբոնատային ցեմենտով:

Ավազաքարերի ստրուկտուրան բազմահատիկային է (0.2- 1.5մմ): Դրանք տեղադրված են միջին էոցենի կտրվածքի ստորին ու վերին հորիզոններում:

Կրաքարերը և կավերը, որոնք տարածված են կտրվածքի միջին մասերում, ունեն փոքր հզորություններ, իսկ վերին մասը ներկայացված են մերգելներով, որտեղ $CaCO_3$ պարունակությունը մինչև 70%

Օրգանածին կրաքարերը տարածված են կտրվածքի միջին մասում, ունեն հստակ արտահայտված շերտայնություն: Ցեմենտացնող հիմնական նյութը համարվում է կալցիտը:

Կրաքարերի հաստվածքի հզորությունը հասնում է 34.5մ՝ կազմելով միջինը 13.85մ: Կրաքարերի հաստվածքի մերձմակերևույթային մասերը խիստ ճեղքավորված և հողմնահարված են: Այդ երեսաշերտի հզորությունը հասնում է 0.4- 0.6մ:

Օգտակար հանածոյի հզորությունների տատանումները պայմանավորված են երկրաբանական ու ֆիզիկա-մեխանիկական գործոններով:

Հորատանցքերում՝ տարբեր խորությունների վրա, դիտվում են կրաքարերի հաստվածքի ճեղքավորված և բեկորացված, կրակավային նյութով թույլ ցեմենտացված կրաքարերի ենթաշերտեր, որոնց հզորությունը տատանվում է 0.04-0.05մ սահմաններում:

Մանրադիտակի տակ կրաքարերի կառուցվածքը մանրա-միջին հատիկային է, մասամբ՝ բյուրեղային, կազմվածքը՝ հոծ և բծավոր:

Կրաքարերի առաջացումը տեղի է ունեցել էոցենյան ծովային ավազանում տերիգեն և հեմոգեն նյութերի նստեցման՝ լիթոգենեզի արդյունքում: Օգտակար հաստվածքում ոչ կոնդեցիոն ենթաշերտերի առաջացումը պայմանավորված է նստվածքակուտակման պայմանների հետագա փոփոխություններով:

Ժամանակակից առաջացումները, որոնք լայն տարածում ունեն, ներկայացված են դելյուվիալ, էլյուվիալ և պրոլյուվիալ առաջացումներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները վկայում են, որ շաղափի կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի սահմաններում կրաքարերի օգտակար հաստվածքները ներկայացված է մեղմաթեք անկմամբ, շերտաձև մարմնի տեսքով:

Հետազոտված կրաքարերի ճեղքավորվածության աստիճանը և ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, միներալոգիական և պետրոգրաֆիական կազմերը համանման են: Տեղամասի սահմաններում տեկտոնական խախտումներ և կարստառաջացման երևույթներ հայտնաբերված չեն:

Հանքավայրի տեղամասի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1-B բլոկը՝ S= 3.32հա

1. Y=8487370, X=4415881
2. Y=8487423, X=4415877
3. Y=8487503, X=4415763
4. Y=8487530, X=4415688
5. Y=8487334, X=4415547
6. Y=8487300, X=4415597
7. Y=8487348, X=4415631
8. Y=8487372, X=4415674
9. Y=8487389, X=4415800
10. Y=8487368, X=4415874

2-C1 բլոկում աշխատանքները շարունակվելու են հետևյալ կոորդինատների սահմաններում՝ S= 1.36հա

1. Y=8487300, X=4415862
2. Y=8487344, X=4415894
5. Y=8487359, X=4415697
6. Y=8487319, X=4415677

3. Y=8487379, X=4415821 7. Y=8487300, X=4415673

4. Y=8487383, X=4415800

Արարատի մարզի Շաղափի օրգանածին կրաքարերի «Շեն» տեղամասը ՇԱԹՎ 25/030 թուլտվությամբ /նախկին 14/637/, 2010 թվականի հոկտեմբերի 7-ից սկսած շահագործվում է: Հանքավայրը այժմ շահագործվում է և 01.01.2021 թվականի դրությամբ 1-B (3.86հա) և (2-C1) 2.04հա մակերեսներով բլոկներում մնացորդային պաշարները կազմում են՝ (1-B) բլոկում 546279մ^3, (2-C1) բլոկում 186650մ^3: Երկու բլոկների մնացորդային պաշարները միասին կազմում է՝ 732929մ^3:

Շահագործման 20 տարիների ընթացքում արդյունաբերական պաշարները կկազմեն 404860մ^3 (1-B) բլոկ, (2-C1) բլոկում 62944մ^3: Երկու բլոկները միասին արդյունաբերական պաշարները կկազմի՝ 467804մ^3:

Մնացած (1-B) բլոկում 141419մ^3, (2-C1) բլոկում 123706մ^3 կարդյունահանվի 20 տարի հետո նախագծի ընդլայնման ժամանակ՝ լիազոր մարմնի կողմից թույլտվության դեպքում:

Բացահանքի աշխատանքային նախագծով շահագործման 20 տարիների ընթացքում նախատեսվում է.

1. Շահագործման տարներին արդյունահանել (1-B) բլոկի 404860մ^3 կամ 1.0մլն տ, իսկ (2-C1) բլոկում 62944մ^3 կամ 155471.68 տ մարվող պաշար:

Տարեկան մարվող պաշարն է՝

(1-B) բլոկում՝ 20243մ^3 կամ 50000տ,

(2-C1) բլոկում 12588.8մ^3 կամ 31094.34տ:

2. Արդյունահանվող պաշարները՝

(1-B) բլոկի 378 800մ^3 կամ 935 636 տ,

(2-C1) բլոկում 57650մ^3 կամ 142395.5 տ:

Տարեկան արդյունահանվող՝

(1-B) բլոկի 18940մ^3 կամ 46781.8տ,

(2-C1) բլոկում 11530մ^3 կամ 28479.1 տ:

3. Բացահանքի օտարման տարածքը կազմում է 3.32հա (1-B) բլոկում և 1.36հա (2-C1) բլոկում,

4. Ծառայման ժամկետը՝ 20 տարի:

5.Հանքարդյունահանման աշխատանքները կատարել հորատապայթեցման եղանակով էքսկավատոր ավտոինքնաթափ համալիրով:

6. Հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջտարյա աշխատանքային ռեժիմով՝ 260 օր:

7. Կատարել խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերակուլտիվացիա:

8. Օգտակար զանգվածի տեղափոխում 10.0կմ հեռավորության վրա գործող գործարան:

Հանքավայրի հիդրոերկրաբանական, լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են հնաքավայրի բաց եղանակով շահագործման համար:

Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասում հատուկ ջրաերկրաբանական ուսումնասիրություններ չեն կատարվել: Դիտարկումներով պարզվել են ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում, բացի այդ, ուսումնասիրված շրջանում և շահագործվող հանքավայրերում ստորերկրյա ջրերի առկայություն չեն արձանագրվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապարներն ունեն բարձր ջրաթափանցելիություն և սակավաթեքից մինչև զառիթափ տեղանքով լանջեր՝ բացահանք ներթափանցող մթնոլորտային տեղումները կհեռանան դրենաժի ձևով և չեն խոչընդոտի հանքի շահագործման աշխատանքներին: Բացահանքը խմելու և տեխնիկական ջրով ապահովելու է պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի բուն տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ, տեսակների աճելավայրեր չեն արձանագրվել, տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հանքավայրի տարածաշրջանում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ

բնության հատուկ պահպանվող տարածքները բացակայում են: Բուն հանքավայրի տարածքը գործնականում զուրկ է բուսական ծածկույթից:

Սողանքային մարմիններ բուն երևակման տարածքում, ինչպես նաև հարակից շրջանում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով՝ հարթավայր, թեքության անկյունը չի գերազանցում 5-10^0 :

Հանքավայրի 4.68հա մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր են:

Սույն նախագծով նախատեսվում է.

Հանքավայրը մշակել բաց եղանակով տարեկան արդյունահանվող պաշար ՝ շահագործման 1-15 տարիներին 18940մ^3 արտադրողականությամբ (1-Բ բլոկ), շահագործման 16-20 տարիներին 30470մ^3 ընդ որում՝ 18940մ^3 (1-Բ բլոկ) և 11530մ^3 (2- C1բլոկ):

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով. հորատապայթեցման աշխատանքներով:

Նախագծվող բացահանքը շահագործման վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

1-Բ բլոկում՝

- ամենամեծ երկարությունը – 261մ
- ամենամեծ լայնությունը – 250մ
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.97մ
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 28.6մ
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 404.86հազ.մ^3
- արդյունահանվող պաշարների քանակը՝– 378.8հազ.մ^3
- մակաբացման ապարների քանակը – 32.5հազ.մ^3
- օտարվող տարածքը 3.32հա

2-C1 բլոկում՝

-ամենամեծ երկարությունը – 220մ

-ամենամեծ լայնությունը – 73մ

-մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.68մ

-օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 12.1մ

-օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 62944մ^3

-արդյունահանվող պաշարների քանակը՝– 57650մ^3

-մակաբացման ապարների քանակը – 9.7հազ.մ^3

-օտարվող տարածքը 1.36հա:

Բացահանքի շահագործման ընթացքում կլինեն օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբերի՝ կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով՝ դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում՝ թողնվում են բացահանքի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար՝ (1-Բ բլոկում)՝ (22760մ^3 կամ 5.62%), 2-C1 բլոկում՝ 4494մ^3 կամ 7.14%:

Շահագործողական կորուստներ՝ դրանք այն կորուստներն են, որոնք առաջանում են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից մաքրելու ժամանակ: Այդ կորուստների միջին հզորությունը ընդունվում է 0.10մ, ծավալը՝ (1-Բ բլոկում)՝ 3300մ^3 կամ 0.82%, 2-C1 բլոկում՝ 800մ^3 կամ 1.27%:

Ընդամենը կորուստները կկազմեն՝ (1-Բ բլոկում)՝ 26060մ^3 կամ 6.44 %, 2-C1 բլոկում՝ 5294մ^3 կամ 8.41%:

Հանքավայրի գտնվում է շահագործման մեջ և աշխատանքները չխաթարելու համար աշխատանքները շարունակվելու են 1285.0 բարձրության նիշից (1-Բ բլոկ):

Նախատեսվում է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հյուսիսային կողմից, նախկին գրունտային ավտոճանապարհի 1253.0մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1285.0մ բարձրության հորիզոն, ավտոճանապարհի երկարությունը կլինի 329.0մ, նմանատիպ աշխատանքների իականացում նախատեսվում է հանքվայրի շահագործման տարիների ընթացքում, որոնց նակարագրությունը տրված է գնահատման հաշվետվությունում: Հողային աշխատանքների ծավալը կկազմի 620մ^3: Բացահանքում 1285.0մ բարձրության հորիզոնում 550մ^3 մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվելու, բարձվելու է ավտոիքնաթափ և տեղափոխվելու դեպի բացահանքի հյուսիսային մասը բացահանքի սահմաններից դուրս՝ N1 լցակույտ: Ավտոճանապարհների անցումը՝ մակաբացման ապարների հավաքումը կուտակումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին և ներքին լցակույտաառաջացում:

1-Բ բլոկի ժամանակակից առաջացումները, որոնք համատարած ծածկել են օգտակար զանգվածը՝ 32500մ^3 ծավալով, իրենցից ներկայացած են դելյուվիալ նստվածքներ և կրաքարերի հաստվածքի խիստ ճեղքավորված և հողմնահարված կրաքարեր: Դելյուվիալ նստվածքների ծավալն է 15800մ^3, իսկ խիստ ճեղքավորված և հողմնահարված երեսաշերտի հզորությունը հասնում է 0.4-0.6մ, որոնց քանակն է 16700մ^3՝ միասին մակաբացման ապարների քանակն է 32500մ^3, ինչը աստիճանաբար ավտոինքնաթափով տեղափոխվելու է բացահանքի հյուսիսային մասում ձևավորվող N1 լցակույտ, այնուհետև հնարավորություն ստեղծվելուց հետո՝ հանքավայրի շահագործման 5-րդ տարվանից սկսած դրանք աստիճանաբար ավտոինքնաթափով տեղափոխվելու են հանքավայրի արդեն արդյունահանված 1285.0մ, 1280մ....1260մ բարձրության բարձրության հորիզոնի վրա և հարթեցվելու: Տեղափոխման հեռավորությունն է միջինը 0.5կմ, մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել S-130 բուլդոզերի օգնությամ:

2-C1 բլոկի մակաբացման ապարերը՝ 9700մ^3 ծավալով նույնպես իրենցից ներկայացնում են դելյուվիալ նստվածքներ՝ 4500մ^3 և խիստ ճեղքավորված և հողմնահարված երեսաշերտ 5200մ^3: 2-C1 բլոկի մակաբացման ապարերը տեղափոխվելու են լցակույտ շահագործման 16-րդ տարվանից սկսած, բացահանքի արևմտյան մասում նրանից 70մ հեռավորության վրա և պահեստավորվում՝ N2 լցակույտ:

N1 լցակույտը զբաղեցնում է 1350մ^2 մակերես վերին մասում և 3450մ^2 ստորին հիմքում, բարձրությունը՝ միջինը 6.5մ.:

N2 լցակույտը զբաղեցնում է 970մ^2 մակերես վերին մասում և 2180մ^2 ստորին հիմքում, բարձրությունը՝ միջինը 6.2մ:

Լցակույտաառաջացման ժամանակ մակաբացման ապարները բուլդոզերով և ավտոինքնաթափով տեղափոխվելու են դեպի լցակույտ և փռվելու թեքության վրա:

Օգտակար զանգվածի տեղափոխումը դեպի 10կմ հեռավորությամբ գտնվող գործարան կատարվելու է КрАЗ-256Б1 12տ և КаМАЗ-55111 10տ տարողությամբ ավտոինքնաթափերով, իսկ մակաբացման ապարների տեղափոխումը դեպի 0.5կմ միջին հեռավորության վրա, լցակույտ՝ կատարվում է 10տ տարողությամբ КаМАЗ-5511 ավտոինքնաթափով:

Հանքավայրի շահագործման ընթացքում հողային ռեսուրսների ընդհանուր տնտեսական վնասը կկազմի՝ 1533.0 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Նախատեսվող գործունեության աշխատանքների ընթացքում կլինեն բացասական ազդեցություններ օդային ավազանի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Մթնոլորտային օդի աղտոտող հիմնական նյութերն են՝ փոշին և շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցների առաջացրած ծխագազերը և գազային արտանետումները:

Բացահանքի շահագործման ընթացքում մթնոլորտ կարտանետվեն ինչպես փոշիներ ավտոճանապարհներից, այնպես էլ վնասակար նյութեր, որոնց արտանետումները կապված կլինեն բացահանքում աշխատող մեքենաների և սարքավորումների շարժիչների տարբեր տեսակի վառելիքի ծախսերի հետ:

Հանքավայրի շահագործման ընթացքում, ջրային ավազանի աղտոտում բացահանքի տարածքից՝ անմիջապես արտանետումների տեսքով չեն նախատեսվում: Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ ջրային ռեսուրսները օգտագործվելու են ճանապարհներին փոշենստեցման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Հողային ծածկույթի վրա ազդեցությունը կարող է լինել ուղղակի և անուղղակի, որոնք կապված կլինեն առավելապես մակերևույթի և ընդերքի վրա ձեռնարկության օբեկտների տեղամասի տեղակայման հետ՝ ուղղակի ազդեցության հետևանքը հանդիսանում է տեխնոգեն գոյացումների ձևավորումը՝ բացահանքային հանվածքը, մակաբացման ապարների լցակույտերը, ճանապարհները, արտադրական հրապարակները, իսկ անուղղակի ազդեցություններ հնարավոր են ձեռնարկության փոշեգազային արտանետումների արդյունքում:

Բուսական և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը պայմանավորված կլինի արդյունահանման աշխատանքների ընթացքում խոտաբուսական ծածկույթի խախտման հետ:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջարդոնները/ և կենցաղային աղբը:

Շահագործման փուլում առաջացող թափոնները ներառում են.

- շարժիչների բանեցված յուղեր՝ 0,09տ/տարի վտանգավորության դասը III, դասիչ՝ 5410020102033 բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
- դիզելային յուղերի մնացորդներ՝ 0,09տ/տարի վտանգավորության դասը III, դասիչ՝ 5410030302033 բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
- բանեցված դողաածածկաններ՝ 0.2 տ/տարի: Դասիչ՝ 5750020213004 բաղադրությունը՝ ռետին-95%, մետաղյա լարեր (կորդ) -5%:
- բանեցված կապարե կուտակիչներ և խոտան՝ 0.07տ/տարի: Դասիչ՝ 9211010013012, բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ և ծծմբական թթու պարունակող լուծույթներ, պլաստիկ կաղապարներ,
- կենցաղային աղբ՝ պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասը և այլն: Թափոնների առաջացման նորման 0.3մ^3 /տարի 1 մարդու համար: Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 9120040001004: Կենցաղային աղբը կուտակվելու է աղբամաններում և ըստ համապատասխան պայմանագրի տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվել են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ),
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,

- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոս,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումներ, որը կատարվելու է միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որի հետագա դատարկումը կկատարվի հատուկ ծառայության ուժերով,
- բուսական աշխարհի օբյեկտների դրանց աճելավայրերի պահպանություն՝ ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարություն,
- կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխում, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության կենդանիների միգրացիայի ուղիների պահպանություն:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան կծախսվի 150000 դրամ գումար:

Կենդանական աշխարհի պահպանությանն նպատակով բացառվելու է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքը, լցակույտը, ավտոտրանսպորտը: Աղմուկի մակադակը թույլատրելի սահմաններում պահելու նպատակով տրանսպորտային միջոցները և մեխանիզմները կաշխատեն միայն սարքին խլացուցիչներով:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև ձորակներով մասնատված ռելիֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումը իրականացվելու է բացահանքում արդյունահանման աշխատանքների ավարտումից հետո: Հանքավայրի շահագործման ավարտից հետո բացահանքում՝ ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ (2-C1) բլոկ է տեղափոխվելու մակաբացման ապարների մնացած 800մ^3՝ փռվում է 1.0մ բարձրությամբ և հարթեցվում:

Հարթեցման աշխատանքներ կատարվում է բացահանքերի հատակի ողջ մակերեսով 30800մ^2, ավտոճանապարհները՝ 3720մ^2, N1 և N2 նախկին լցակույտերի մակերեսները՝ համապատասխանաբար՝ 3600մ^2 և 2180մ^2, արդյունաբերական հրապարակը՝ 210մ^2:
Ընդհանուր վերականգնվող մակերեսը կկազմի 4.051հա տարածք:

Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո կատարվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, որը կկատարվի հանքավայրի շահագործման ընթացքում լեռնային աշխատանքների հետևանքով խախտված հողատարածությունների վերականգնված 3.08հա տարածքի վրա: Կենսաբանական ռեկուլտիվացիայի ժամանակ կիրառվելու է հիդրոցանքի եղանակը, այս եղանակը ստեղծվել է խախտված մեծ տարածքների կանաչապատման համար:

Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով օգտագործվելու է կորնգան տեսակի բազմամյա խոտաբույսը:

Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 2070.9հազ.դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար մշակել է մի շարք գործողությունների ծրագիր համապատասխան միջոցառումներով և ներառված է գնահատման հաշվետվությունում:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով հաշվետվության շրջանակներում կատարվել է արտանետումների ցրման և սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ: Ներկայացված հաշվարկներց և ցուցանիշներից վնասակար արտանետումները մոտ են կամ ցածր նրանց թույլատրելի սահմանային մեծություններից:

Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը /արտանետումները, ֆիզիկական ազդեցությունը, մնացորդային ազդեցությունը, վտանգները/, շրջակա միջավայրի բաղադրիչների որակի վերահսկողությունը: Այս ամենը անհրաժեշտ է ազդակիր համայնքների բնակչության անվտանգության և առողջության, աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման, ռացիոնալ բնօգտագործում և բնապահպանություն ապահովելու համար:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդի աղտոտման վերահսկման, համապարփակ գնահատման և մթնոլորտային օդի վիճակի կանխատեսման, ինչպես նաև հանրությանը մթնոլորտային օդի աղտոտման վերաբերյալ ընթացիկ և հրատապ տեղեկատվության տրամադրման նպատակով պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են՝ ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ^3, ազոտի երկօքսիդի համար՝ 0.2մգ/մ^3, մրի համար՝ 0.15մգ/մ^3:
2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:
4. Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ.դրամ:

Շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կմշակվի հանքի փակման վերջնական նախագիծը: Փակման ծրագրի նպատակն է նախատեսել ֆինանսական երաշխիքներ հանքի ժամանակավոր դադարեցման կամ վերջնական փակման դեպքերում:

Փակման ծրագիրն ունի 3 բաղադրիչ՝ հանքի ֆիզիկական փակում, շրջակա միջավայրի վերականգնում, ֆինանսական երաշխիքներ: Հանքավայրի փակման միջոցառումները ներառում են՝ տեխնիկա-տրանսպորտային միջոցների և արտադրական սարքավորումների հեռացում, ժամանակավոր կառույցները ապամոնտաժում, շինարարական աղբը և չօգտագործված նյութերը դուրս բերեում, ռեկուլտիվացման աշխատանքների ավարտում, հարթեցում և բերրի հողաշերտի

փոում, հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական մեղմացման ծրագրի ամբողջական կատարում, հիմնական ճանապարհների բարեկարգում, հանքի փակման մշտադիտարկման պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում:

Պատճառաբանական մաս. Նախատեղվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության կողմից նախատեսվող գործունեության իրականացումը արժանացել է հավանություն:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, սպորտի, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արարատի մարզպետարանը:

Պետք է փաստել, որ ՇՄԱԳ հաշվետվությունում շրջակա միջավայրի պահապանության, ինչպես նաև սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել է բավարար միջոցառումների ծրագիր:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումներ ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի Ընդերքօգտագործման հատևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
4. Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հաշվետվությունում, նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական նորմերը, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև ապահովել համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

5. Շահագործման աշխատանքների ընթացքում գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների հանդիպման դեպքում անհարժեշտ է ապահովել պահպանության համար բոլոր անհարժեշտ միջոցառումները և առաջնորդվել «Կենդանական աշխարհի մասին» (3 ապրիլի 2000թ.) ՀՀ կառավարության կողմից հաստատված օրենքի դրույթներով:
6. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:
7. Հանավայրի շահագործման ընթացքում ապահովել աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
8. Պայթեցման աշխատանքներն անհրաժեշտ է կատարել ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 6-ի «պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության միասնական կանոնները հաստատելու մասին» N291-ն որոշման պահանջով՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կողմից:
9. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 781-Ն որոշման պահանջներով:
10. Մինչ աշխատանքներ իրականացնելը անհարժեշտ է կատարել հողի (0.2հա) նպատակային, գործառնական նշանակության փոփոխություններ:
11. Հանքի տարածքի այն տեղամասում, որտեղ նկատելի են քարերի կրոմլեխանման կուտակումներ վերնաշերտի հեռացումն իրականացնել հնագետի վերահսկողությամբ:
Հաշվետվությունում առկա առաջարկվող մեղմացնող միջոցառումները ընդունել պարտադիր կատարման ենթակա:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳՈԼԴ ԼԱՅՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Արարատի մարզի, Շաղափի օրգանածին կրաքարերի հանքավայրի «Շեն» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ն. Նասիբյան